Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 15-06-2021 թ. որոշմամբ
«ՅՈՆԳ ՎՈՒՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՅՈՆԳ ՎՈՒՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ Տիչինայի 52ա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00286
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2004-03-18
1.5 ՀՎՀՀ-ն		02572065
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10744512
		+(374)55746045
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.housoaygi.org
1.8 Էլեկտրոնային փոստը		ywcf@netsys.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արտաշես Երիցյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Բարեգործական օգնություն ՀՀ բնակվող սոց. անապահով աղջիկներին կացության տրամադրում և խնամք	31246700
9. Հիմնադրի ներդրումը՝		

Digitally signed by
YERITSYAN
ARTASHES
1108570348
Date: 2021.08.12
16:14:48 AMT

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Բարեգործական օգնություն ՀՀ բնակվող սոց. անապահով աղջիկներին կացության տրամադրում և խնամք	24003943	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	26907943	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	24003943	

Նշումներ՝

Կցված ֆայլում ներառված է աուդիտորական եզրակացությունը և ֆինանսական հաշվետվությունները

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ____20____թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Յոնգ Վուման» բարեգործական հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորի եզրակացություն

6 Հոգաբարձուների խորհրդի կազմ

7 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

8 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ

11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Հիմնադրամի գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Տնօրեն՝	Արտաշես Երիցյան

«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 99 26 77 77

"IFP" LLC
49/3 Komitas St., 7th floor., Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 99 26 77 77

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Յոնգ Վուման» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յոնգ Վուման» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, հիմնադրամին վերագրելի զուտ ակտիվների շարժի մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի առ 31 դեկտեմբերի 2020թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն, զուտ ակտիվների շարժի ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան:

Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Այլ հանգամանքներ

Նախորդ աուդիտը իրականացվել է այլ աուդիտորի կողմից՝ 31 դեկտեմբեր 2019թ.-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջանների համար, որի գծով արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարելու Հիմնադրամը, կամ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.

- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Հիմնադրամն այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Աշոտ Բարսեղյան
Տնօրեն

«Այ էֆ Փի» ՍՊԸ
07 հունիսի, 2021թ.

Անդրեյ Բախշեյան
Ղեկավար աուդիտոր

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Քլոուդին Բագջյան
Խոհրդի նախագահ
Ֆրանսիայի քաղաքացի

Անիտա Շալֆուն
Խորհրդի անդամ
ԱՄՆ քաղաքացի

Ատալի Բերբերյան
Խորհրդի անդամ
ԱՄՆ քաղաքացի

«Յոնգ Վուման» բարեգործական հիմնադրամ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Շնորհներից եկամուտ	5	20,309	17,500
Այլ եկամուտ (շահառուներից)		10,494	14,530
Վարչական ծախսեր	6	(21,751)	(24,520)
Ծրագրային և այլ ծախսեր	7	(5,157)	(7,600)
Զուտ օգուտ/ (վնաս) փոխարժեքային տարբերություններից		(3,895)	90
Արդյունք մինչև հարկում		-	-
Շահութահարկի գծով ծախս		-	(47)
Տարվա զուտ արդյունք		-	(47)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		-	(47)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 7-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արտաշես Երիցյան
Տնօրեն

Մարիա Թադևոսյան
Գլխավոր հաշվապահ

«Յոնգ Վուման» բարեգործական հիմնադրամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		37	25
Դեբիտորական պարտքեր		463	79
Դրամական միջոցներ	8	21,582	6,187
		22,082	6,291
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	1,915	2,863
		1,915	2,863
Ընդամենը ակտիվներ		23,997	9,154
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	20,929	5,135
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	1,421	1,424
		22,350	6,559
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	1,915	2,863
		1,915	2,863
Ընդամենը պարտավորություններ		24,265	9,422
Զուտ ակտիվ			
Կուտակված արդյունք		(268)	(268)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 7-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արտաշես Երիցյան
Տնօրեն

Մարիա Թադևոսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր դրամաշնորհներից	31,189	19,283
Այլ մուտքեր	10,444	14,448
Վճարումներ գնումների դիմաց	(10,673)	(16,123)
Վճարումներ աշխատակիցներին	(11,752)	(11,547)
Վճարումներ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	(3,744)	(3,800)
Այլ ելքեր	(82)	(194)
	15,382	**2,067**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված դրամաշնորհներ հիմնական միջոցների գծով	58	494
Հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց վճարումներ	(58)	(494)
	-	-
Դրամական միջոցների զուտ հոսք	**15,382**	**2,067**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	13	163
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	6,187	3,957
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը (ծնթ. 8)	**21,582**	**6,187**

1 Հիմնադրամի մասին

"Յոնգ Վուման" բարեգործական հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2004թ.-ին: Հիմնադրամի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2004թ. մարտի 3-ին, գրանցման համարը՝ 222.160.00286, վկայական՝ 03Ա 063924:

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տիչինայի 52ա: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02572065:

31.12.2020թ.-ին ավարտվող տարվա ընթացքում Հիմնադրամը իրականացրել է կացության տրամադրում և խնամք ծրագիրը՝ ՀՀ-ում միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 17-23 տարեկան սոցիալապես անապահով աղջիկներին: Շահառուները տրամադրում են որոշ ֆինանսական հատկացում Հիմնադրամի ծրագրերի գծով:

Հիմնադրամը, ընտրելով համապատասխան շահառուներին, հնարավորություն է ընձեռում նրանց համապատասխան կրթություն ստանալ և քայլեր է ձեռնարկում նրանց աշխատանքի ապահովման համար:

Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրում 17-23 տարեկան աղջիկներին ընդգրկելու համար գործում են հետևյալ պայմանները.

- սոցիալապես անապահով ընտանիքում ապրելը,
- ավագ դպրոցի ատեստատի առկայությունը,
- ընտանիքի կամ խնամակալի հետ համաձայնագրի առկայությունը,
- օրինակելի վարքը:

Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գնահատականն Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը հաշվեկշռային ժամանակահատվածում և դրա ներխուժումը ՀՀ տարածք, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը արտակարգ դրություն սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշումը զգալի ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Համավարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման՝ այդ թվում ճանապարհորդության արգելման, կարանտինի, ոչ հիմնական ծառայությունների մատուցման ժամանակավոր արգելման հետևանքով բազմաթիվ ընկերություններ և անհատներ հարկադրված են եղել երկարաժամկետ կամ անորոշ ժամանակահատվածով սահմանափակել կամ դադարեցնել իրենց գործունեությունը, ինչի հետևանքով ՀՀ Կառավարությունը ձեռնարկել է տնտեսական

միջոցառումների ծրագրեր՝ համավարակի տնտեսական ազդեցության չեզոքացման [illegible] Համաճարակի հետագա տևողությունը և ազդեցությունը, ինչպես նաև հիմնախնդրի [illegible] ուղղված միջոցառումների արդյունավետությունը այս պահին շարունակում են մնալ [illegible]

Ի լրումն, 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմն [illegible] հանրապետության ստեղծել է քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական [illegible] որը որպես հետևանք առաջացրել է դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի [illegible] ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական [illegible] անորոշությունների և տատանումների ավելացման:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Հիմնադրամի [illegible] ֆինանսական վիճակի վրա: Հիմնադրամը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ [illegible] գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, [illegible] ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից [illegible] Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե [illegible] հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Հիմնադրամի հետագա տարիների [illegible] վիճակի վրա:

2 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 14-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ-ներ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

3. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ից:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի ասիճանակարգ»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:
Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
Ֆինանսական ակտիվներ	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Դրամական միջոցներ	21,582	6,187
	21,582	6,187

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
Ֆինանսական պարտավորություններ	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Կրեդիտորական պարտքեր	1,196	1,079
	1,196	1,079

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և կրեդիտորական պարտքեր:

Դրամական միջոցների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի ասիճանակարգի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի ասիճանակարգի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հիմնադրամի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	1,196	-	-	-	
	1,196	-	-	-	

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	1,079	-	-	-	
	1,079	-	-	-	

5. Շնորհից եկամուտ

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Եկամուտներին վերաբերող շնորհներից	19,303	16,519
Ակտիվներին վերաբերող շնորհներից	1,006	981
	20,309	17,500

6. Վարչական ծախսեր

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Աշխատանքի հատուցում	15,428	15,337
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,859	4,434
Չփոխհատուցվող հարկեր	-	2,425
Հիմնական միջոցների մաշվածություն	1,006	981
Աուդիտի ծախսեր	600	500
Ընթացիկ նորոգման և սպասարկման ծախսեր	95	464
Հեռահաղորդակցության ծախսեր	593	17[illegible]
Բանկային ծախսեր	50	1[illegible]
Այլ ծախսեր	120	18[illegible]
	21,751	24,52[illegible]

7. Ծրագրային և այլ ծախսեր

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Շահառուների (ուսանողների) սննդի և սպասարկման ծախսեր	5,076	7,382
Արտարժույթի փոխանակումից ծախսեր	81	186
Այլ ծախսեր	-	32
	5,157	7,600

8. Դրամական միջոցներ

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	20,908	1,961
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	174	4,188
Դրամարկղում - դրամով	500	38
	21,582	6,187

9. Հիմնական միջոցներ

	Համակարգչ. սարքավ. հազար դրամ	Գրասենյակային գույք հազար դրամ	Այլ հիմնական միջոցներ հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Սկզբնական արժեք				
1 հունվարի 2019թ.	1,135	4,693	301	6,129
Ավելացումներ	306	-	188	494
31 դեկտեմբերի 2019թ.	1,441	4,693	489	6,623
1 հունվարի 2020թ.	1,441	4,693	489	6,623
Ավելացումներ	-	-	58	58
31 դեկտեմբերի 2020թ.	1,441	4,693	547	6,681
Կուտակված մաշվածություն				
1 հունվարի 2019թ.	1,133	1,381	265	2,779
Մաշվածություն	22	914	45	981
31 դեկտեմբերի 2019թ.	1,155	2,295	310	3,760
1 հունվարի 2020թ.	1,155	2,295	310	3,760
Մաշվածություն	69	885	52	1,006
31 դեկտեմբերի 2020թ.	1,224	3,180	362	4,766
Հաշվեկշռային արժեք				
1 հունվարի 2019թ.	2	3,312	36	3,350
31 դեկտեմբերի 2019թ.	286	2,398	179	2,863
31 դեկտեմբերի 2020թ.	217	1,513	185	1,915

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 2,023 հազ. դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,613 հազ. դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ այլ սահմանափակումների ենթակա հիմնական միջոցներ:

2006թ. մայիսի 25-ին կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, ըստ որի գույքի սեփականատեր Ալֆրեդ Բազջյանը ժամանակավոր անհատույց օգտագործմանն է հանձնում անշարժ գույքը Յոնգ Վուման Բարեգործական հիմնադրամին:

10. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	5,135	2,624
Ստացված դրամաշնորհներ դրամով (Ծնթ. 10.1)	31,189	19,283
Շնորհից եկամտի ճանաչում	(19,303)	(16,519)
Փոխարժեքային տարբերություն	3,908	(253)
Մնացորդը տարեվերջին	20,929	5,135

10. 1 Ստացված դրամաշնորհներ

Ստացված դրամաշնորհներ դրամային	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Թամարա Նայգել	25,515	-
Նատալի Բագջյան	5,732	-
Ալֆրեդ Բագջյան	-	19,287
Ֆրանսիայի դեսպանատուն	-	490
	31,247	19,777
Որից.		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում	58	494
Ծախսումների վերագրվող	31,189	19,283
	31,247	19,777

11. Կրեդիտորական պարտքեր

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Ստացված ծառայությունների գծով	1,196	1,079
Հարկերի գծով	225	294
Ստացված կանխավճարներ	-	51
	1,421	1,424

12. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	2,863	3,350
Ավելացումներ (Ծնթ. 10.1)	58	494
Շնորհից եկամտի ճանաչում	(1,006)	(981)
Մնացորդը տարեվերջին	1,915	2,863

13. Պայմանական պարտավորություններ

Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

14. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Արտարժութային գործարքներ

Հիմնադրամի գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես հաշվետու տարվա ֆինանսական արդյունքում:
Ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորություններ

Գործառնական կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով:
Հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով: Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ դրույքները.

Համակարգչային տեխնիկա	20-30% տարեկան գծային մեթոդով
Գրասենյակային գույք	25% տարեկան գծային մեթոդով
Այլ հիմնական միջոցներ	25% տարեկան գծային մեթոդով

Շնորհներ
Հիմնադրամը որպես շնորհ հաշվառում է հիմնադիրներից, տեղական և միջազգային կազմակերպություններից ու անհատներից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով: Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են այդ շնորհները:

Հավելված Ա – ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի ասիճանակարգի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Կրեդիտորական պարտքեր	1,196	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.08.2021 15:43